ՂԱՐԱԲԱՂ



# «ՀԻՄԱ Ո՞Վ Ա ԴԱՎԱՃԱՆԸ՝ ԼԵՎՈ՞ՆԸ, ԹԵ՞ ՍԵՐԺԸ»

Արփի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
gayane@hraparak.am

«Առաջ Հայաստան» դրոշակներով մեքենաները, պարզվում է, վերջին մի քանի օրերին խառնել էին նաեւ Ստեփանակերտի կյանքը: Եթե մոտավորապես 15 օր առաջ ղարաբաղցիների համար միեւնույն էին ՀՀ նախագահական ընտրությունները, ապա վերջին օրերին այն բուռն քննարկումների թեմա էր դարձել՝ երթուղային տաքսիներում, սրճարաններում, բուհերում: Ղարաբաղցիներն անգամ կատակում էին՝ ասելով, որ եղանակները տաքանալուն զուգահեռ՝ տաքացան նաեւ ընտրական թեմաները: Ստեփանակերտի «Պիտաչոկ» կոչվող պուրակում հավաքվող պապիկների հերթական խոսակցության թեման հայաստանյան ընտրություններն էին, իսկ ավելի կոնկրետ՝ «Սերժ Սարգսյա՞նը, թե՞ Լեւոն Տեր-Պետրոսյանը»: «Ասում են՝ Լեւոնը դավաճան ա: Բայց հիմա ո՞վ ա դավաճանը՝ Լեւո՞նը, թե՞ Սերժ Սարգսյանը, որ զինված ուժերին սահմաններից կտրում ա, թե ինչ ա գնան-իրեն ձայն տան: Բա ես պայմաններում կարելի՞ ա էդպիսի բան անել»,- սա էր տարեցների երեկվա խոսակցության թեմաներից մեկը: ԼՂՀ պաշտպանության բանակից հրաժարվեցին որեւէ մեկնաբանություն տալ շրջանառվող լուրերին: Սակայն բոլորին հայտնի է, որ ԼՂՀ զինված ուժերի անդամները գնացել են Հայաստան՝ քվեարկելու Սարգսյանի օգտին:

Թեկնածուների մասին ղարաբաղցիները, այնուամենայնիվ, վերապահումով են խոսում: Շատերից կլսես այն կարծիքը, որ «եթե Սերժը չանցնի, Ղարաբաղը կտան թուրքերին»: Որոշ երիտասարդներ էլ այն համոզման են, որ միայն ղարաբաղցի նախագահը կհոգա Ղարաբաղի մասին: Ստեփանակերտցի 53-ամյա Բենիկ Առաքելյանը կարծում է, որ Սերժ Սարգսյանն է հաղթելու ՀՀ նախագահական ընտրություններում: «Սերժը Պուտինի հետ է սովորել: Չեմ հիշում՝ որտեղ, բայց որ սովորել է, էդ՝ հաստատ: Դե, համ էլ տելեվիզորը ամեն օր ցույց է տալիս, թե ինչքան մարդ է հավաքվել նրա կազմակերպած միտինգին»,- ասում է մասնագիտությամբ շինարար Բենիկը: Իսկ ուսյալ ստեփանակերտցիները կարծում են, որ միտումնավոր են ցուցադրվում Սարգսյանի ուռճացրած հանրահավաքները, որպեսզի միամիտները, կարծելով, թե նրա համակիրները շատ են, իրենք էլ թեքվեն դեպի նա ու անգամ լեգենդներ հյուսեն վերջինիս շուրջ: «Դե, մարդիկ կան, որ շատ լավ էլ հասկանում են, որ ժողովրդին ստիպողաբար բերել-լցրել են հրապարակները, որ նման պատկեր ստեղծեն»,- ասում է 21-ամյա ուսանողուհի Գայանե Մարտիրոսյանը: Իսկ ԼՂՀ-ում նման պատկերը սփռողները միայն Ռ1, Ռ2 եւ «Արմենիա» հեռուստաալիքներն են, որոնք հայտնի են ՀՀ պետական ապարատին ծառայություններ մատուցելով:

ՀՀ նախագահական ընտրություններին արցախյան մամուլը միայն վերջերս էր սկսել անդրադառնալ: Պաշտոնական «Ազատ Արցախ» թերթում հիմնականում Սերժ Սարգսյանին գովաբանող ու Լեւոն Տեր-Պետրոսյանին քարկոծող հոդվածներ էին:

ՀՅԴ «Ապառաժ» թերթն էլ հիմնականում Վահան Հովհաննիսյանի քարոզչությունն էր անում: Մյուս թեկնածուների մասին Ղարաբաղում գրեթե չեն խոսում, բացառությամբ Արտաշես Գեղամյանի, ում մասին, ինչպես ղարաբաղցիներն են ասում, անգամ խոսելն է ափսոս: Իսկ Արման Մելիքյանին, թեեւ վատ չեն վերաբերվում, բայց լուրջ էլ չեն ընկալում: «Կարգին համեստ չինովնիկ էր, ինչի՞ դրեց թեկնածությունը, կարող ա՞ չգիտեր, որ չի անցնելու»,- ասում է ստեփանակերտցի 68-ամյա Արշավիր Ստեփանյանը:

Ու մինչ ստեփանակերտցիները քննարկում են թեկնածուների որակական ու մասնագիտական հատկանիշները, գյուղերում ՀՀ ընտրությունների օրը որոշ մարդիկ անգամ ոչխար են մորթել: «Մեկը Արցախյան շարժման 20 ամյակին ենք մորթել, մեկն էլ՝ ընտրությունների օրը»,- ասում են գյուղացիները: